

*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՐԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Հուլիսի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոտեղեկատվության բաժինը՝ մասնագիտացված ագրոտեղեկատվության կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հուլիսի երրորդ փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում ցածր է եղել նորմայից 1-2 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են հուլիսի 23-ին. Տալուշում գրանցվել է +28...+33°C (Բագրատաշեն՝ +34°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +26...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +34...+36°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +34...+36°C, նախալեռնային շրջաններում՝ +27...+29°C, Շիրակում՝ +25...+30°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +25...+29°C, նախալեռնային շրջաններում՝ +31...+33°C, Գեղարքունիքում՝ +21...+25°C (Մասրիկ՝ +27°C), Լոռիում՝ +25...+30°C, Արմավիրում, Արարատում՝ +34...+36°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +25...+27°C, նախալեռներում՝ +30...+35°C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են հուլիսի 30-ին. Տալուշում՝ +13...+16°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +6...+8°C, նախալեռնային շրջաններում՝ +13...+15°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +12...+15°C, նախալեռնային շրջաններում՝ +6...+9°C, Շիրակում՝ +6...+11°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +6...+11°C, նախալեռնային շրջաններում՝ +13...+15°C, Գեղարքունիքում՝ +6...+11°C, Լոռիում՝ +7...+12°C, Արմավիրում, Արարատում՝ +15...+19°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +5...+7°C, նախալեռներում՝ +12...+16°C:


Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակային տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 23-41մմ (134-306%), Լոռիում՝ 43-65մմ (212-367%), Տավուշում՝ 37-78մմ (282-430%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 25-39մմ (95-159%), նախալեռներում՝ 6-8մմ (50-85%), Գեղարքունիքում՝ 32-66մմ (168-401%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 9-20մմ (50-99%) Հանքավանում՝ 84մմ, նախալեռներում՝ 5մմ (61%), Արարատում՝ 6-13մմ (138-260%), Արմավիրում՝ 11-18մմ (180-450%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 39մմ (255%), նախալեռներում՝ 12մմ (353%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 10-58մմ (588-879%), նախալեռներում՝ 14-89մմ (177-730%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են հուլիսի 30-ին. լեռնային շրջաններում՝ +4...+7°C, Արարատյան դաշտում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +12...+15°C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Հացահատիկային մշակաբույսեր

Առանձին լեռնային շրջաններում հացահատիկային մշակաբույսերը հասունացել են. կատարվել է բերքահավաք, մնացած լեռնային շրջաններում շարունակվել են գտնվել կաթնային և մոմային հասունացման փուլերում:

Նախալեռնային շրջաններում սկսվել է եգիպտացորենի հասունացումը: Բույսի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 192սմ, տասնօրյակային աճը կազմել է 7սմ:

Դրության գնահատականը լավ:



Պտղաբույսեր և խաղող

Ամենուրեք շարունակել է պտղաբույսերի պտղի հասունացումը, շաքարանյութերի կուտակումը, բերքահավաքը:

Արարատյան դաշտում սկսվել է խաղողի վաղահաս տեսակի հասունացումը:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել պտղաբույսերի հասունացման և շաքարային նյութերի կուտակման համար:



Բանջարանոցային մշակաբույսեր, կարտոֆիլ

Լեռնային շրջաններում սկսվել է բանջարանոցային մշակաբույսերի ծաղկումը, շարունակվել է կաղամբի գլխի ձևավորումը և հասունացումը, կարտոֆիլի ծաղկումն ավարտվել է, տեղի է ունեցել պալարագոյացում: Զարգացման այս փուլում բույսի պահանջը խոնավության նկատմամբ ավելանում է:

Հովտային շրջաններում սկսվել է բանջարանոցային մշակաբույսերի հասունացումը, կատարվել է բերքահավաք:



Խոտաբույս, ծխախոտ

*Հովտային շրջաններում շարունակվել է առվույտի ցողունի աճը երկրորդ հունձից հետո:
Շարունակվել է ծխախոտի տերևների հասունացումը, կատարվել է տերևաքաղ:
Խոտաբույսերի և ծխախոտի դրության գնահատականը լավ է:*

